ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №282Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի հոկտեմբերի 5-ի №282Ա որոշմամբ «ԷՐԻԿ-ՆԱՋԵՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1181 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) Ընկերությունը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի 2017 թվականի փետրվարի 15-ի №ԵԿԴ/0605/04/16 վճռով սնանկ է ճանաչվել,

գ) 2023 թվականի 17-ին Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

դ) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը մինչև 2023 թվականի փետրվարի 17-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 442 131 (չորս հարյուր քառասուներկու հազար հարյուր երեսունմեկ) դրամ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-ին հոդվածը, «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի «ԷՐԻԿ-ՆԱԶԵՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №282Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2023 թվականի փետրվարի 17-ը հաշվարկված պարտքը կազմում է 442 131 (չորս հարյուր քառասուներկու հազար հարյուր երեսունմեկ) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
-- ------- 2023թ.